ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (ՀՆՀ)

Ամսաթիվը՝ 22 հունիսի, 2016թ.
Պայմանագիր՝ EE-CW-55/2016
ԳԲՄ դրամաշնորհ NTF 012163
Համաշխարհային բանկի ծրագրի անունը՝
Էներգախնայողության ծրագիր

Էներգախնայողության միջոցառումների իրականացում ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում, EE-CW-55/2016

Սույն հրավերը հաջորդում է սույն ծրագրի համար հրապարակված Ծրագրի Գնումների ընդհանուր ծանուցմանը, որը զետեղվել է **"UN Development Business (UNDB) online"** համացանցում 2012թ. հունիսի 30-ին:

1. Հայաստանի Հանրապետությունը Համաշխարհային բանկից /Գլոբալ բնապահպանական հիմնադրամի միջոցներով/ ստացել է դրամաշնորհ Էներգախնայողության ծրագրի ծախսերը հոգալու համար և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը հանրային օբյեկտներում էներգախնայողության ներդրումների անհրաժեշտ վճարումները կատարելու համար:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը հրավիրում է ներկայացնել հայտեր ***ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ***-ում էներգախնայողության միջոցառումների իրականացման համար:

2. Հետաքրքրված իրավասու հայտատուները մրցութային փաստաթղթերն ամբողջությամբ հայերեն լեզվով կարող են ստանալ՝ գրավոր դիմում ներկայացնելով Հիմնադրամ /Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն/ :

Հիմնադրամը կհրավիրի նախամրցութային ժողով **2016թ. հուլիսի 11-ին, ժամը 15:00-ին:** Այդ ժողովի ընթացքում Պատվիրատուն կնկարագրի Մրցութային հայտերի նախապատրաստման, ներկայացման և գնահատման գործընթացները, ինչպես նաև Էներգախնայողության միջոցառումների առաջարկները /ԷԽՄԱ/, կպարզաբանի էներգախնայողական միջոցառումների նախապատրաստման հետ կապված Հայտատուների կողմից բարձրացված հարցերը: Նախամրցութային ժողովին չներկայալը չի կարող հանդիսանալ հայտի մերժման պատճառ:

3. Հայտերը պետք է ուժի մեջ լինեն Հայտը բացելուց հետո 90 օրվա ընթացքում և ուղեկցվեն **Հայտի երաշխիքով**, ստորև նշված գումարով, **կամ Հայտի ապահովման հայտարարագրով:**

ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿՀ-ում էներգախնայողության միջոցառումների իրականացման համար՝ **3,630,800 ՀՀԴ**

4. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային բանկի՝ Ուղեցույցներ. ՎԶՄԲ վարկերի և ԶՄԱ փոխառությունների և դրամաշնորհների միջոցներով Համաշխարհային բանկի վարկառուների կողմից ապրանքների, աշխատանքների և ոչ խորհրդատվական ծառայությունների գնումներ 2011թ. հունվար սահմանված ընթացակարգերով՝ Ազգային

Մրցակցային Սակարկության եղանակով /նախագծում, շինարարական աշխատանքներ, չափում և հավաստում, շահագործում և պահպանում/:

Որակավորման չափանիշները ներառում են.

- Հաջողակ Հայտատուի կողմից վերջին երեք (3) տարիների ընթացքում կատարած շինարարական աշխատանքների միջին տարեկան ծավալը պետք է կազմի՝
  544,620,000 ՀՀԴ

- Գլխավոր կապալառուի փորձ վերջին 5 տարիների ընթացքում նմանատիպ ծավալի, բնույթի և բարդության աշխատանքների նվազագույնը երկու պայմանագիր /այս պահանջին համապատասխանելու համար աշխատանքները պետք է 70 տոկոսով ավարտված լինեն/:
  127,078,000ՀՀԴ

- Շրջանառու ֆինանսական միջոցներ և/կամ վարկային գծերի հնարավորություններ, այլ պայմանագրային պարտավորություններով չծանրաբեռնված՝
  60,513,000 ՀՀԴ

5. Շահագրգիռ և իրավասու հայտատուները կարող են ստանալ լրացուցիչ տեղեկություններ և ուսումնասիրել դրանք բոլոր աշխատանքային օրերին /բացի շաբաթ և կիրակի օրերից/ ժամը 09:00-ից մինչև 18:00 Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամում:

Հայտերը պետք է ներկայացվեն **Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ,** մինչև **2016թ. հուլիսի 21-ը, ժամը 15:00**:

Էլեկտրոնային եղանակով մրցութային հայտերի ներկայացում չի թույլատրվում: Հայտերը կբացվեն մասնակցելու ցանկություն ունեցող հայտատուների ներկայությամբ:
6.Ուշացած հայտերը կմերժվեն և կվերադարձվեն փակ վիճակում հայտատուներին:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և
էներգախնայողության հիմնադրամ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0019, Պռոշյան 1-ին նրբանցք, 32 տուն,
Հեռ/Ֆաքս: + /374 10/ 588-011
Էլ. Փոստ: g.zara@r2e2.am
Ինտերնետային հասցե: www.r2e2.am